

ԿԱՐԱՊԵՏ ԱՄԻՐԱ ՊԱԼԵԱՆԻ ՆՈՒԷՐԸ ԵՐՈՒՍԱՂԷՄԻ ՊԱՏՐԻԱՐՔՈՒԹԵԱՆ

● **շար. Ա. Էջն**

րիարքութիւնը իւրայատուկ եւ սերտ կապեր ունեցած է, ոչ թէ միայն որպէս Ազգային սահմանադրութեան ենթակայ կառոյց (մինչեւ անոր չեղեալ համարուիլը), այլ մանաւանդ որպէս կարեւոր կրօնական, բարեպաշտական, մշակութային եւ ազգային կեդրոն։

Երուսաղէմի պատրիարքութեան 1866-ին հիմնուած «Սիոն» ամսագրի այդ տարուայ յունիսի (1, 6) թիւին մէջ տեղ գտած է տեղեկագրութիւն մը յայտնի Պալեան ընտանիքի շառաւիղներէն Կարապետ ամիրա Պալեանի կտակին մասին։

Պալեանները մեծ դեր ունեցած են Օսմանեան ճարտարապետութեան զարգացման եւ արդիականացման մէջ։ Կարապետ ամիրան (1800-66), որ իր հօր Գրիգորին յաջորդած էր որպէս Օսմանեան արքունիքի ճարտարապետ, ծառայած էր Մահմետ Բ., Ապտիլմեծիտ եւ Ապտիլլաղիդ սուլթաններուն։ Հեղինակն է շարք մը յայտնի շէնքերու, ինչպէս՝ Ս. Փրկիչ Ազգային հիւանդանոցը (1832-34), Երեք եկեղեցիներ (1834-38), Օրթոգիւղի մզկիթը (1854), Տոլմապահչէ պալատը (1853-55) եւ այլ կառոյցներ։

Կարապետ ամիրա Պալեանի, 19-րդ դարու երկրորդ կէսին կատարած Եայրովայի կալուածի մը նուիրատուութեան մասին, «Սիոն»ը որոշ մանրամասնութիւններ կու տայ (իզուոն եւ ուղղագրութիւնը ըստ բնագրին պահուած են).–

«Ամենապատիւ Սրբազան Պատրիարք Հայրը [Եսայի Արք. Կարապետեան] Պօլիս եղած ժամանակը, Գերապատիւ եւ Ազգասէր Պալեան Կարապետ Ամիրայն յայտնած էր Նորին Սրբազնութեան, թէ Եայրովայի մէջ ունեցած իւր կալուածքը կտակաւ սուրբ Երուսաղէմայ Աթոռոյն թողուլ կ'ուզէ, անոր տարեկան արդիւնքովն սուրբ Քաղաքին մէջ կամ մօտերը ժառանգաւորաց Դպրոց մի հաստատուելու նպատակաւ։ Բարեպաշտ եւ հոգեսէր Ամիրային այս ազգահաճոյ առաջարկութիւնը Սրբազան Հօր ի սուրբ Աթոռս գալէն զկնի, Տնօրէն Խորհրդոյ միջոցաւ ընդունուելով, հարկաւոր վաւերագրութիւնները ու հաստատագրերը թէ՛ Ազգասէր Ամիրային եւ թէ՛ սուրբ Աթոռոյն հաճութեամբը ի գործ դրուեցան։ Հետեւապէս յիշեալ

կալուածները Գերապատիւ եւ Աթոռասէր Ամիրային կողմէն սուրբ Երուսաղէմայ փոխանորդին յանձնրւած ըլլալով, ապրիլ ամսոյն վերջերը յատուկ հրաման եւ հրահանգ խրկուեցաւ [sic] ասկէ առ Արժ. Սիօն վարդապետը, որ անձամբ երթայ ի Եայրովա եւ աչքէ անցընելով զամեն ինչ՝ սկսի տիրաբար հոգ տանիլ կալուածներուն։ Հրամանը, ինչպէս որ գրուած է մեզ, ի գործ դրուեր է, եւ հարկաւոր ծախսեր այ եղած է։ Ազգասէր ու հոգեսէր Ամիրային սոյն աստուածահաճոյ կամաց ամենայն բարեյաջողութեամբ եւ հաստատուն ու անդարձ կտակագրութեամբը ի գործ դրուիլը օրհնեալ Ազգիս հանրութեանը ուրախութեամբ սրտի հաղորդելով, կը խոստանանք ուրիշ անգամ կտակագրութեանց պայմաններն այ Սիօնիս միջոցաւ հրատարակել ի պարծանս մեծանուն կտակողին եւ ի ցնծութիւն բովանդակ Ազգիս»։

Տատեան նուիրատուներ

Հետաքրքրական է նաև Տատեան ընտանիքի շառաւիղներու նուիրատուութիւնները Երուսաղէմի պատրիարքութեան։ Ինչպէս յայտնի է, 18-րդ-19-րդ դարուն Տատեանները կարեւոր եւ բարձրաստիճան պաշտօններ ունեցած են Օսմանեան կայսրութեան մէջ։

«Սիոն» 1866-ի հոկտեմբեր (1, 10) եւ նոյեմբեր (1, 11) թիւերուն մէջ կարճ տեղեկութիւններ կան Տատեան չորս նուիրատուներու տուած գիրքերուն եւ արժէքաւոր առարկաներուն մասին.– Օսմանեան կայսրութեան վառօղապետ Յովհաննէս պէյ Տատեան (1832-1869), արքունի խորհրդական Առաքել պէյ Տատեան (1820-1886), յայտնի ճարտարապետ Ներսէս պէյ Տատեան (1825-1872) եւ զիտնական Սիմօն պէյ Տատեան։ Այսպէս (բնագրին լեզուն եւ ուղղագրութիւնը պահուած են)՝

«Ամենապատիւ Սրբազան Պատրիարք Հայրը [Եսայի Արք. Կարապետեան] Պօլիս եղած ժամանակ, Վսեմաշուք Յովհաննէս Պէյը Տատեան [sic] բարհաճած էր նուիրել սուրբ Աթոռոյս՝ ի յիշատակ անուան իւրոյ հետեւեալ պատուական գրքերը, զորս թէպէտ եւ անագան [ուշ], այլ լի երախտագիտութեամբ սրտի կը փութանք յիշատակել հոս զանոնք, որք են ընդ ամենը 47 կտոր։

Ազլաս, աշխարհացոյց տախտակաց գիրք՝ Եւրոպիոյ [sic] միայն, 3 հատոր՝ փառակազմ։

Տնկաբանութեան գիրք (Flora Fluminensis)՝ Հ. Յովսէփ Մարիանօ Վէլլոզոյի, յորում պարունակին հանդերձ պատկերօք Պրագիլիոյ մէջ գտնուած տունկերը. 11 հատոր՝ ընտիր կազմ։

Դարձեալ 5 հատոր գիրք տնկաբանութեան՝ ուրիշ Հեղինակէ յօրինեալ, պատկերազարդ։

Ճանապարհորդութիւն շուրջ զաշխարհաւ, հրամանաւ Լուի ԺԸ թագաւորին Գաղղիոյ [Յրանսայի], յօրինեալ պատմաբանօրէն ի Լուի տը Ֆրէսիմէ, 4 հատոր։

Պատմութիւն բրածոյ տնկոց, յօրինեալ յԱտոյֆ Պրօնկեարէ (M. Adolphe Brongniart). Միակ հատոր։ Երկրորդ հատորն է նոյնին Ազլասը, այսինքն՝ երկրի իւրաքանչիւր խաւերուն մէջ գտնուած տունկերուն պատկերները։

Պատմութիւն՝ այգիներուն փնասակար երող միջատաց, եւ ի մասնաւորի Բիրալէ վերայ։ Միակ հատոր պատկերազարդ։

Ընդհանուր դիտողութիւնք անդամազննութեան յօդաւոր կենդանեաց՝ համեմատօրէն։ Հեղինակութիւն Հերբել Սթրոստիւրքէմի (Hercule Strandsurckheim), միակ հատոր պակերազարդ։

Տարրական Ազլաս տնկաբանութեան (Atlas élémentaire de Botanique), որուն մէջ կան 2340 պատկեր։

Օրագիր գործնական երկրագործութեան, պարտիզաց մշակութեան եւ ընտանեկան խնայողութեան. Յամէ 1837-1844. Ամբողջ 8 հատոր պատկերազարդ։

Գեղջիկական տուն (Maison rustique du XIX siècle), 5 հատոր։

Քաղուածք դասուց ուսմանց շինուածոց կամ ճարտարապետութեան կամբջոց եւ թումբոց, Մ. Ի. Սկանզինէ (M. I. Sganzin)։

Գիրք անասնաբուժութեան (Traité d'éhygiène vétérinaire) 2 հատոր։

Բառգիրք՝ բնական գիտութեանց մէջ գործածելիք բառից, հանդերձ ստուգաբանութեամբք արմատական նշանակութեանց, 2 հատոր։

Բառգիրք՝ ի հայէ ի ուուս, աշխատասիրութեամբ Աղէքսանգրի Մակարեան Խուդաբաշեանց, տպեալ ի Մոսկուա, 2 հատոր, փառակազմ եւ ոսկէզօծ»։

Տատեան նուիրատուք

«Տատեան Վսեմաշուք Առաքէլ Էֆէնտին շնորհեց սուրբ Աթոռոյս թանգարանին,

Մէկ կտոր քարացեալ անդիխա։

Վեց պզտիկ անդիխա պատուական քարեր։
Մէկ դանակ սաւվաթ ըսուած [արծաթեղէնի վրայ սեւաթոյր բանուածք]»։

«Տատեան Վսեմաշուք Ներսէս պէյը նուիրեց սուրբ Աթոռոյս թանգարանին,

Անգղիոյ թագաւորական պալատին ամեն կողմէն առնուած տեսքերը, զատ զատ փորագիր տպուած։

Չորս կտոր մեծաղիր գրեանք զանազան նկարնեբու։

Մէկ մանրագիտակ (microscope) հանդերձ իւր պարագաներով»։

«Պ. Տատեան Վսեմաշուք Սիմօն պէյը շնորհեց՝
Մէկ ելեքտրական գործիք մը մեծ, որոյ ապակիին տրամագիծն է 82 հարկւրամեղր։
Մէկ փոքր առձեռն նոյն ելեքտրական գործիքէն»։

Մտ 150 տարի անց, արդեօք այս ցանկերուն վրայ եղած գիրքերուն եւ առարկաներուն ճակատագիրը ի՞նչ եղած է կամ քանի՞ն պահուած է մինչեւ այսօր Երուսաղէմի մատենադարանին կամ թանգարանին մէջ։

Ինչպէս հանրութեան ծանօթ է, վերջին քանի մը տարիներու ընթացքին փորձեր կը կատարուին Երուսաղէմապատկան կալուածներու օրինական կարգավիճակը վերահաստատելու համար։ Հետաքրքրական պիտի ըլլար իմանալ, թէ արդեօք Կարապետ ամիրա Պալեանի Երուսաղէմի պատրիարքութեան նուիրած Եայրովայի կալուածը վիճելի կարգավիճակ ունեցող կալուածներու ցանկին մէջն է, թէ՞ ուրիշ ճակատագիր ունեցած է։